

145/311

45+

ՊԱՏԱՆՈՒ ԳՐԱԴԱՐԱՆ

№ 15 ՀԱՍՏՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ ՍԵՐԻԱ № 15

ԲԱՆՎՈՐՆԵՐԸ ՑԵՎ

ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԸ

Թագմ. Հ. ՀԱ.ԲՈՒԹՅՈՒՆՅԱՆ


ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ. ՅԵՐԵՎԱՆ. 1927

ՊԱՏԱՆՈՒ ԳՐԱԴԱՐԱՆ

№ 15 ՀԱՍՏԱԿԱԳԻՏԱԿԱՆ ՍԵՐԻԱ № 15

ԲԱՆՎՈՐՆԵՐԸ ՅԵՎ  
ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԸ

Թարգմ. Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ.—ԵԵՐԵՎԱՆ. 1927.

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ  
ՅԵՎ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ\*.

Քառասուն տարի լե անցել գյուղացիների ազատագրությունից։ Բնական ե միանգամայն, վոր մեր հասարակությունը մի առանձին խանդավառությամբ ե տուսում փետրվարի 19-ի՝ հին ճորտատիրական Ռուսաստանի անկման որը, մի եպոխայի սկիզբ, վոր ժողովրդին ազատություն ու բարեկեցություն եր խոստանում։ Սակայն չպիտի մոռանալ, վոր տոնակատարների գովարանական ճառերում ճորտատիրության ու նրա բոլոր արտահայտությունների նկատմամբ ցուցադրվող անկեղծ թշնամանքի հետ միասին նաև շատ կեղծիք կա։

«Մեծ ոեթումը» Ամբողջապես կեղծիք ու խաբելություն կողոպտեց գյու- ե «մեծ ոեֆորմի» այն գնահատականը,

զացիներին։ վոր մեզնում գործածական ե դարձել, թե՝ «գյուղացիների ազատագրությունը հողով հանդերձ պետական հետգնումի ոգնությամբ ե»։ Մինչդեռ, իսկապես, այդ ոեֆորմը գյուղացիներին ազատեց հողից, վորովհետև դարերի ընթացքում գյուղացիների ձեռքում գտնված հողաբաժիններից հսկայական հողամասեր կտրեցին, նրանց ձեռքին շատ չնչին հողաբաժիններ թողնելով, իսկ հարլուր-հազարավոր գյուղացիների նույնիսկ հողազուրկ դարձրին։ Գյուղացիներին թալանեցին կրկնակի չափով. բավական չեր, վոր նրանց ձեռքից հողը կտրեցին-խլեցին, նրանց ստիպեցին դեռ վճարել «հետգնում» այն հողամասի համար, վոր թողին նրանց ձեռքին, թեպետ և ալդ հողաբաժինը

\* Թաղված և Վ. Ի. Լենինի 1901 թվին գլուխ հողվածից։



11-2624198

№ 574

Գրառեպվար № 226 (բ)

Տիրամ 3000

Պետհատի առաջին տպարան Վաղարշապատում

միշտ ել նրանցն եր յեղել։ Պիտի ավելացնենք նաև, վոր հողի հետգնումի գինը եր իսկական գնից շատ ավելի բարձր երնշանակվել։

Դյուղացիների ազատագրությունից տաս տարի հետո գյուղատնտեսության վիճակը հետազոտելու ժամանակ կալվածատերերը պետական պաշտոնյաներին խոստովանում եյին, վոր գյուղացիներին սպիտել են վճարել վոչ միայն իրենց հողի, այլև իրենց ազատության գինը։ Յեզ անձնական ազատության հետգնում վերցնելով, գյուղացիներին, այնուամենայնիվ, ազատ մարդիկ չդարձրին։ Նրանց քսան տարով ժամանակավորապես կախման մեջ թողին, նրանց թողին վորպես ստորին մի դաս (և մինչև որս ել մնում են այդպիսին), վոր յենթակա յե ծեծի ու հատուկ հարկատվության։ Նրանք չեյին համարձակվում գուրս գալ կիսաճորտական համայնքից, ազատորեն տնօրինել իրենց հողը ու ազատորեն վերաբնակություն հաստատել պետության վորևե վայրում։ Մեր գյուղացիական ռեֆորմը կառավարության մեծահոգությունը չեր վոր արտահայտում եր. ընդհակառակն, այդ ռեֆորմը պատմական մի շատ մեծ որինակ ե այն բանի, թե ինքնակալ կառավարության ձեռքից ամեն մի գործ ինչ աստիճանի խեղաթյուրված ե դուրս գալիս. պատերազմական պարտությունների \*, Փինանսական սոսկալի դժվարությունների ու գյուղացիների ահարկու խռովությունների ճնշման տակ կառավարությունն ուղղակի հարկադրված եր ազատագրել նրանց։

Գյուղացիներին Յարն ինքը խոստովանեց, վոր պիտի այս ես ելին ազատագրել վերից, քանի դեռ չեն սկսել ազատագրում, ցածից ազատագրել։ Սակայն ձեռնամուխ վոր «չվիրավուրեն» կալվածատերին լինելով ազատագրության գործին, կառավարությունը բոլոր հնարավոր ու անհնարին միջոցներով աշխատեց բավարարել «վիրավորված» ճորտատերերի ագանությունը։ Կա-

\* 1855-56 թ. Դրիմի պատերազմը, վորից ցարական Ռուսաստանը պարտված դուրս յեկավ։ Մասնաւթյունը թարգմ.

ռավարությունն ամենաստոր բանից անդամ յետ չմնաց, նա ուժորմն իրագործող մարդկանց հենց կալվածատերերի միջից ընտրեց։ Առաջին կոչի հաշտարար միջնորդներին կառավարությունը ցըեց ու նրանց փոխարեն այնպիսի մարդիկ նշանակեց, վորոնք ընդունակ չգտնվեցին մերժելու մորտատերերին, յերբ սրանք հողերի սահմանները վորոշելուց հետո նույնիսկ սկսեցին թալանել գյուղացիներին։

«Ազատագրում» Յեզ «մեծ ռեֆորմ» իրագործվեց զինեյին ու... գքն. վորական եկղեկուցիաների ոգնությամբ գակահարում։ ու այն գյուղացիների գնդակահարությամբ, վորոնք կանոնադրական թղթերը հրաժարվում եյին ընդունել։ Զարմանալի չե, ուրեմն, վոր այն ժամանակի ամենալավ մարդիկ, ճնշված գրաքննիշ-գնչակապների ձեռքից, այդ «մեծ ռեֆորմը» լառության անեծքով դիմավորեցին...»

Նոր կոռվորությունից ազատագրված գյուրյան (բարձինա)։ Պացին ռեֆորմատորի ձեռքից այնպես մոռացված, կողոպտված, ստորացված ու իր հողաբաժնին կպած դուրս յեկավ, վոր այլևս նրան վոչինչ չեր մնում, բացի «կամավոր» կոռվորության գնալը։ Յեզ գեղջուկն սկսեց մշակել իր նախկին աղայի հողը, նրանից «կապալով վերցնել» իրենից կարած-խլած հողերն ու քաղցած ընտանիքի համար վարկով հաց ստանալու նպատակով՝ ամառային աշխատանքին ձմեռվանից վարձվել։ Այն «ազատաշխատանքը», վորի վրա «աստվածային որհնությունը» կանչելու համար գյուղացիներին հրավեր եր կարդում ճիզվիտ-տերտերի կազմած մանիֆեստը, գործնականում ճորտություն ու աշխատանքահատուցում դարձավ։

Կալվածատերերի այս ճնշումին, վոր պահպում եր ռեֆորմն ստեղծող ու իրագործող պաշտոնակաների մեծահոգության շնորհիվ, ավելացավ նաև կապիտալի ճնշումը։ Փողի իշխանությունը, վոր նույնիսկ ճնշում եր, որինակ,

Գրանսիական գյուղացուն, վորը կալվածատիրական իշխանությունից ազատվել եր վոչ թե վողորմելի ու կիսատպուատ ու ֆորմով, այլ ժողովրդական հզոր հեղափոխությամբ, — փողի այդ իշխանությունն իր ամբողջ ծանրությամբ մեր կիսաճորտ գյուղացու վրա ընկավ։ Գյուղացին ստիպված եր ինչ գնով ել լինի ժող ճարելու, վորպեսզի վճարել կարողանար ու եփորմի շնորհիվ ավելացած հարկերն ու հողի վարձը, գնել կարողանար գյուղացու տնային մթերքները գործածությունից հանող արդյունաբերության եժանագին արտադրանքներն ու իր ուտելու հացը և այլն։ Գյուղի շերտա-

գորումը։ Նը վոչ միայն ճգմեց, այլև բաժանքաժանարեց։ Գյուղացիության հսկայական մասն անընդհատ քայլայվեց ու պրոլետար դարձավ, իսկ փոքրամասնության միջից առաջացան փոքրաքանակ, բայց ճարպիկ կուլակների ու տնտեսավար գեղջուկների խմբակներ, վորոնք յուրացրին գյուղացիների տնտեսությունն ու հողերը, նոր առաջացող գյուղական բուրժուազիայի կադրերը կազմելով։ Հետուեփորմյան ամբողջ քառասնամյակը գյուղացիությունն ալս ճեռվ կազմալուծող մի անընդհատ պրոցեսս ե, վոր դանդաղորեն ու տանջալից մեղքնում եր նրան։ Գյուղացու կյանքը մուրացիկ վիճակի հասավ։ Նա բնակվում եր անասունների հետ, ցնցոտիներ եր հազնում ու բանջարեղենով կերակրվում։ Գյուղացին փախչում եր իր հողաբաժնից, հենց վոր ֆախչելու տեղ եր գտնում։ Իր հողաբաժնից ազատվելու համար, նույնիսկ, փրկանք եր վճարում նրան, ով համաձայնում եր վերցներ նրա հողաբաժնը, վորի վճարումներն ավելի շատ եյին, քան յեկամուաը։

Սով, համանա- Գյուղացիները քաղցած եյին մշտապես և րակ, մահ։ տասնյակ հազարներով մեռնում ելին հաճախակի կրկնվող անբերբիությունից, սովից ու համաճարակից։

Գյուղացին եր ի Մեր գյուղում իրերի դրությունն ալժմ փրկությունը ել այսպես է, չարց ե առաջ գալիս՝ ինչ յելք բանվորների հետ միուրյուն կըն- կա այս ամենի համար և ինչ միջոցներով բելու մեջն է։ պետք ե բարելավել գյուղացիների վիճակը։ Կապիտալի ճնշումից մանր գյուղացիությունն ազատ- վել կարող ե միայն այն դեպքում, իերբ բանվորական շարժմանը կհարի, ոգնելով նրան՝ սոցիալիստական կարգ հաստատելու, հողն ու արտադրության այլ միջոցները (գործարաններ, ֆաբրիկաներ, մեքենաներ և այլն) հասա- րակական սեփականություն դարձնելու համար։

Սակայն մեր գյուղացին, ինչպես մենք տեսանք, տանջվում ե վոչ միայն, և նույնիսկ վոչ այնքան կապիտալի ճնշումից, վորքան կալվածատերերի ճնշումից ու ճորտատիրության մնացորդներից։ Գյուղացիության դրությունն անչափ վատթարացնող ու նրա ձեռքն ու վորքը կապող այս կապանքների դեմ անողոք պայքար մղելու գործը վոչ միայն հնարավոր ե, ալև անհրաժեշտ ե յերկրի հասարակական զարգացման բոլոր շահերի տեսակետից, վորովհետև գեղջուկի անելանելի մուրացկանությունը, խավարամառւթյունը, իրավազրկությունն ու ստորացումը մեր հալբենիքի բոլոր կարգերի վրա ասիականության կնիքն ե զնում։ Յեզ սոցիալ-դեմոկրատիան իր պարտքը կատարած չի լինի, յեթե ամեն տեսակի օգնություն չհասցնի այդ պայքարին։ Այդպիսի ոգնությունը, կարճ ասած, գյուղում դասակարգային պայքար մտցնելով պիտի արտահայտվի։

Գյուղացու թշվառությունն այժմս (ա- Յարտկան կա- վել կամ պակաս ընդհանուր ճեռվ) հան- ուագառությունը գածանոթ ե դարձել, 1861 թվի ու եփորմի գատարգի Շթերբություններից ու պետական ոգնությունը, իավագառարան յեղած պատարգած թյան արհրաժեշտության մասին յեղած պատարգան ե, արտահայտությունը ընդունված ճշմար- տություն ե դարձել։ Մեր պարտքն ե մատնանշել, վոր

այդ թշվառություններն առաջանում են՝ գյուղացիությունը դասակարգորեն հարստահարելուց, վոր կառավարությունը հարստահարող դասակարգերի հավատարիվ պաշտպանն ե, և նա, ով անկեղծորեն ու լրջորեն ուզում ե արմատապես բարելավել գյուղացիների դրությունը, վոչ թե կառավարությունից ոգնություն պիտի սպասե, այլ նրա հարստահարությունից ազատվել ու քաղաքական ազատություն նվաճել պիտի ձգտի: Խոսում են, թե հետզնան վճարումները չափազանց բարձր են, թե կառավարությունը բարերար չափով պակասեցրել ե այն ուժամկետը յերկարել: Մրան մենք կասենք հետեւյալը, վոր հետզնան ալդ բոլոր վճարումները վոչ այլ ինչ են, բայց յեթե որինական ձևերով ու չինովնիկական արտահայտություններով քողարկված մի կողոպուտ՝ սարքած կալվածատերերի ու կառավարության կողմից գյուղացիների վերաբերմամբ, վոչ այլ ինչ են, բայց յեթե մի տեսակ հարկ ճորտատերերին՝ նրանց ստրուկների ազատագրության համար:

Մեր շարժումն այժմ իր տրամադրության տակ ամբողջ մի բանակ ունի՝ բաղկացած բանվորների բանակից, վոր ալեկոծված ե սոցիալիզմի ու ազատության համար մղվող պայքարով, ինտելիգենտների բանակից, վոր մասնակցել ու մասնակցում ե շարժումին ու ներկալումս ցրված ե Ռուսաստանի բոլոր ծայրերը և, վերջապես, համակիրների բանակից, վոր հավատով ու հուսով դիտում ե բանվորական շարժումը և պատրաստ ե նրան հազարավոր ծառայություններ մատուցաներ: Յեվ մեր առաջ մեծ խնդիր ե դրվում՝ կազմակերպել այս բոլոր բանակները, կազմակերպել այնպես, վոր մենք ընդունակ դառնանք վոչ միայն վաղանցուկ բռնկումներ սարքելու, վոչ միայն թշնամուն պատահական ու բաժան-բաժան (այդ պատճառով ել՝ վոչ վտանգավոր) հարվածներ հասցընելու, այլ և հետապնդել թշնամուն անշեղ, համառ ու

տոկուն պայքարով բոլոր կողմերից, հետապնդել ինքնակալ կառավարությունը՝ ամենուրեք, ուր ցանում ե նա հարստահարություն ու ննձում ատելություն: Բայց միթե հնարավոր ե այս նպատակին հասնել առանց բազմամիլիոն գյուղացիության մեջ դասակարգալին պայքարի ու բաղաքական գիտակցության սերմերը գցելու: Յեվ մի ասեք, թե անհնարին բան ե այդ: Վոչ միայն հնարավոր ե այդ, այլև կատարվում ե արդեն հազարավոր ուղիներով, ուղիներ, վոր խուսափում են մեր ուշադրությունից ու մեր ներգործությունից:

Դասակարգա- Դասակարգային պայքարի ու քաղաքա-  
յի և պայքարը կան գիտակցության սերմերը բազմամի-  
գուլում՝ գյու- լիոն գյուղացիության մեջ տարածելու  
դագրության ամե գործն անչափ լայնորեն ու արագ կընթա-  
նենիս ուղինե: Նա այն դեպքում, յերբ մենք այդպիսի  
ներգործության համար կարողանանք լողունդ տալ և խայ-  
տառակ ճորտատիրական իրավունքի բոլոր մնացորդներից  
ուսւ գյուղացիությունն ազատագրելու դրոշակը պարզել:  
Քաղաքները յեկող գյուղացի մարդը հիմա յել արգեն հե-  
տաքրքրությամբ դիտում ե իրեն համար անհասկանալի  
բանվորների պայքարը և նրա մասին լուրը տարածում  
բոլոր հետամնաց անկյունները: Մենք կարող ենք և պի-  
տի անենք, վորպեսզի կողմանկի դիտողների այս հետա-  
քրքրությունը փոխարինվի յեթե վոչ լիակատար հասկա-  
ցողությամբ, գոնե անորոշ մի գիտակցությամբ, վոր բան-  
վորները կովում են ամբողջ ժողովրդի շահերի համար. ալդ-  
պիսով նրանց հետաքրքրությունը կսկսի ավելի ու ավելի  
համակրության փոխվել: Այն ժամանակ արդեն վոստի-  
կանական կառավարության դեմ հեղափոխական բանվո-  
րական կուսակցության տանելիք հաղթանակի որը կմոտե-  
նա մեզ համար նույնիսկ անսպասելի և անգուշակելի  
արտգությամբ:

Խոկրա, № 3, 1901 թ.

Համ կենին:

## ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ՈՒ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ\*.

Կանչ ե ուզում Ներկայումս (1905 թ. վերջին) Մոսկվա գաղութ կվայում տեղի ունեցող գյուղացիական բյունից գյուղ միության համագումարը նորից հերթափացին:

Կան խնդիր ե դարձնում կենսական այն հարցը, թե գյուղացիական շարժման նկատմամբ սոցիալ-դեմոկրատիան ինչ դիրք պիտի բռնի:

Գյուղացիական շարժման հարցն այժմ կենսական ե դարձել վոչ միայն տեսականապես, այլև ամենամիջական գործնական տեսակետից: Մեր ընդհանուր լողունդները պիտի փոխենք ու դարձնենք անմիջական կոչեր՝ ուղղված հեղափոխական պրոլետարիատի կողմից հեղափոխական գյուղացիությանը: Հիմա հասել ե այն մոմենտը, յերբ գյուղացիությունը հանդես ե գալիս վորպես ռուս կյանքի նոր ձեր գիտակից սաեղծագործողը: Յեվ գյուղացիության գիտակցության աճեցումից հսկայական չափով կախված ե ռուսական մեծ հեղափոխության ընթացքն ու յելքը:

Ի՞նչ ե ուզում հեղափոխությունից գյուղացիությունը: Ի՞նչ կարող ե առաջ հեղափոխությունը գյուղացիությանը: Այս յերկու հարց, վոր պարտավոր ե լուծել յուրաքանչյուր քաղաքական գործիչ և, հատկապես, յուրաքանչյուր գիտակից բանվոր, վորը քաղաքական գործիչ ե բառիս ամենալավ, բուրժուական պոլիտականությամբ չալականված, իմաստով:

Գյուղացիությունը հող և ազատություն ե ուզում: Այս մասին յերկու կարծիք լինել չե կարող: Բոլոր գիտակից բանվորները մի բան են ուզում և մի բանի ձգտում՝ գյուղացիությունն ամբողջ հողն ու ամբողջ ազատությունն ստանա: «Ամբողջ հողը» — այս նշանակում ե, վոր վոչ մի մասնակի զիջումով ու վողորմությամբ չպիտի բավա-

\* Քաղված ե Վ. Ի. Խենինի 1905 թ. գրքած հոդվածից:

րարվել, այս նշանակում ե, վոր վոչ թե հույսը պիտի դնել կալվածատերերի ու գյուղացիների համաձայնության վրա, այլ կալվածատիրական հողալին սեփականությունը վոչնչացնելու վրա: Յեվ գիտակից պրոլետարիատի կուսակցությունը, սոցիալ-դեմոկրատիան, այս մտքով ել ամենավճռական կերպով արտահայտվեց. Ռուս. Սոց. Դեմոկրատական Բանվորական Կուսակցությունը 1905 թ. մայիսին տեղի ունեցած իր համագումարում ընդունեց մի բանաձև, ուր ասված ե, թե գյուղացիության հեղափոխական պահանջները պիտի պաշտպանել, թեկուզ այդ պահանջները լինեն սասնատիրական հողերի բռնագրավում: Այս բանաձևը պարզապես ցույց ե տալիս, վոր գիտակից բանվորների կուսակցությունը պաշտպանում ե գյուղացիության ամբողջ հողն ստանալու պահանջը:

«Ամբողջ ազատությունը» — այս նշանակում ե լիակատար գոչնչացումն պետական անպիսի իշխանության, վոր ամբողջապես ու բացարձակ կերպով կախումն չի ունենա ժողովրդից, վորն ընտրված չի լինի ժողովրդից, յենթակա չի լինի ժողովրդին ու չի փոխվի նրա կողմից: «Ամբողջ ազատությունը» — այս նշանակում ե, վոր վոչ թե ժողովուրդը պիտի յենթարկվի չինովակիներին, այլ չինովակիները՝ ժողովրդին:

Իհարկե, հողի և ազատության համար եք՝ բանվորների պայքարող գյուղացիները բոլորն ել գիտակցորեն չեն վերաբերվում այդ պայքարին հանրապետություն հաստատեականին: լու պահանջ առաջադրում: Սակայն, կասկածից դուրս ե, վոր գյուղացիության պահանջները գեմոկրատիկ բնույթ ունեն: Այդ պատճառով ել գյուղացի-

ությունը ապահով պիտի լինի, վոր նրա պահանջները պրո-  
լետարիատը կպաշտպանի: Գյուղացիները պիտի գիտենան,  
վոր քաղաքներում պարզված կարմիր դրոշակը վոչ միայն  
արդյունաբերական ու գյուղական բանվորների մոտակա-  
ռւ կենսական պահանջների պայքարի դրոշակն ե, այլև  
միլիոնավոր ու տասնյակ-միլիոնավոր մանր հողագործնե-  
րի պահանջների պայքարի դրոշակը:

Ճորտատիրական իրավունքների մնացորդներն ամեն  
ձեռով ու տեսակներով մինչև որս ել անողոք կերպով  
կեղեքում ու ճնշում են ամբողջ գյուղացիությանը և պրո-  
լետարներն իրենց պարզած կարմիր դրոշակով պատերազմ  
են հայտարարում այդ կեղեքումի դեմ:

Սակայն կարմիր դրոշակը չի նշանակում, թե պրո-  
լետարիատը պաշտպանում ե միայն գյուղացիության պա-  
հանջները: Այն նշանակում ե նույնպես, վոր պրոլետա-  
րիատն իր ինքնուրույն պահանջներն ունի: Կարմիր դրո-  
շակը վոչ թե հողի ու ազատության համար մղվող կովի  
նշան ե միայն, այլև կովի, վոր ուղղված ե մարդը մար-  
դուն շահագործելու դեմ, ժողովրդական աղքատության  
դեմ, կապիտալի տիրապետության դեմ:

Յեվ այստեղ ահա մեր առաջ կանգնում ե յերկրորդ  
հարցը, թե հեղափոխությունը ինչ կարող ե տալ գյուղա-  
ցիությանը: Գյուղացիների անկեղծ բարեկամներից շա-  
տերն այս հարցը հաշվի չեն առնում ու չեն նկատում  
սրա կարևորությունը: Նրանք կարծում են, վոր բավա-  
կան ե առաջարկել ու լուծել այն հարցը, թե ինչ են ցան-  
կանում գյուղացիները, և բավական ե ստանալ դրա պա-  
տասխանը՝ հող և աղատություն: Մեծ սխալ ե այդ: Լիա-  
կատար աղատությունը, բոլոր չինովիկների ու, մինչև  
անգամ, պետության գլուխը կանգնած անձի լիակատար  
ընտրովի լինելն անգամ կապիտալի տիրապետությունը  
դեռ չի վերացնի, սակավաթիվ մարդկանց հարստությունն  
ու մասսաների աղքատությունը դեռ չի վոչնչացնի: Յեվ

ամբողջ ժողովրդին պատկանող հողի վրա ինքնուրույն  
կերպով տնտեսություն կարող ե վարել միայն նա, ով ունի  
գործիքներ, լծկաններ, մեքենաներ, սերմացու, ընդհան-  
րապես դրամական միջոցներ և այլն: Իսկ նա, ով աշխա-  
տող ձեռքերից բացի վոչինչ չունի, անխուսափելիորեն  
կապիտալի ստրուկ կմնա, նույնիսկ, յեթե գեմոկրատիկ  
պետություն լինի, նույնիսկ, յեթե հողն ամբողջ ժողո-  
վրդին պատկանելիս լինի: Մտածել հողի «սոցիալիզա-  
ցիալի» մասին, առանց կապիտալը սոցիալիզացիայի լեն-  
թարկելու, մտածել հողի հավասարար ոգտագործման մա-  
սին՝ կապիտալի ու ապրանքային տնտեսության գոյու-  
թյան որոք, նշանակում ե մոլորության մեջ ընկնել: Յեվ-  
րոպակի համարյա բոլոր յերկրները սոցիալիզմի այդ կամ  
նման մոլորության շրջանն ապրել, անց են կացըել: Բան-  
վոր դասակարգի պայքարի փորձը բոլոր յերկրներում  
գործնականապես ցուցադրել ե այդ սխալի վողջ վասնգը,  
և այժմ Յեվրոպայի ու Ամերիկայի պրոլետար սոցիալիստ-  
ները համարյա աղատվել են այդ վտանգից:

Առփվացիալիզ- Այսպիսով գիտակից բանվորների կար-  
մի համար: Միը դրոշակը նշանակում ե, նախ և առաջ,  
այն, վոր մենք մեր բոլոր ուժերով պաշտպանում ենք  
գյուղացիության պայքարը՝ հանուն աղատության ու հո-  
ղի և, յերկրորդ, վոր մենք դրանով չենք բավականանում,  
այլ առաջ ենք գնում: Մենք պայքարում ենք վոչ միայն  
հողի ու աղատության, այլև սոցիալիզմի համար: Սոցիա-  
լիզմի համար մղվող պայքարը կապիտալի դեմ սղվող  
պայքար ե: Այդ պայքարը մղում են նախ և առաջ վար-  
ձու բանվորները, վորոնք ուղղակի ու ամբողջովին կա-  
պիտալից կախումն ունեն: Իսկ մանր սեփականատերերն  
իրենք ել մասամբ կապիտալ ունեն, իրենք ել հաճախ շա-  
հագործում են բանվորներին: Այդ պատճառով մանր սե-  
փականատերերից քչերն են սոցիալիզմի մարտիկների  
շարքերը մտնում: մտնում են միայն նրանք, վորոնք

վճռական ու գիտակից կերպով անցնում են բանվորների կողմը՝ ընդգեմ կապիտալի, հանրական սեփականության կողմը՝ ընդգեմ մասնավոր սեփականության:

Այս թե ինչու սոցիալ-դեմոկրատներն ասում են, թե նրանք ամբողջ գյուղացիության հետ միասին պայքար են մզում կալվածատերերի ու շինովնիկների դեմ և, բացի ալ, քաղաքային պրոլետարները գյուղական պրոլետարների հետ միասին պայքար են մզում կապիտալի դեմ: Հողի ու ազատության համար մղվող պայքարը դեմոկրատիկ պայքար եւ կապիտալի տիրապետությունը վոչնչացնելու համար մղվող պայքարը սոցիալիստական պայքար եւ:

Ուրեմն, ջերմապես վողջունենք գյուղացիական միությունը, վոր վճռել ե հողի և ազատության համար պայքարել համերաշխությամբ ու տոկունությամբ, անձնազոհությամբ և առանց տատանումների: Այդ գյուղացիներն իսկական սոցիալ-դեմոկրատներ են: Դեմոկրատիզմի ու սոցիալիզմի խնդիրները հասկանալու մեջնրանց արած սխալները մենք տոկունությամբ ու համբերությամբ պիտի բացատրենք, վորովհետև նրանք մեր դաշնակիցներն են, վորոնց հետ կապում ե մեզ ընդհանուր մեծ կոիզմը: Այդ գյուղացիներն իսկական հեղափոխական դեմոկրատներ են, և սրանց հետ մենք պիտի գնանք, ու կգնանք կովելու, վորպեսզի այժմյան հեղափոխությունը կատարյալ հաղթանակ տանի: Մենք ամբողջովին ու մեծապես համակրում ենք գյուղացիական միության ընդունած ծրագիրը ընդհանուր գործադուլի մասին, ինչպես և այս վճիռը, վոր կոչ ե անում քաղաքային բանվորներին ու գյուղացիական չքավորությանը հաջորդ անգամին կովի գուրս գալ համերաշխ ու միացյալ ուժերով: Այդ ծրագիրն իրականացնելու համար գիտակից բոլոր բանվորները կգործադրեն իրենց ամբողջ ջանքերը: Սակայն վոչ միություն, թեկուղ այդ կնքված լինի ամենաազ-

նիվ ու վճռական հեղափոխական դեմոկրատների հետ, պրոլետարներին չի կարող ստիպել՝ մոռացության տալ իրենց ել ավելի մեծ ու կարևոր նպատակը, այն ե՛ պարքարել հանուն սոցիալիզմի, հանուն կապիտալի տիրապետության լիակատար գոչնչացման, հանուն բոլոր աշխատավորներին ամեն տեսակի շահագործումից ազատազրելուն: Հառաջ, բանվորներ ու գյուղացիներ, դեպի հողի ու ազատության համար մղվող ընդհանուր կոիզմը: Հառաջ, միջազգային սոցիալ-դեմոկրատիայի միջոցով համախըմբած պրոլետարներ, դեպի կոիզմի հանուն սոցիալիզմի:

Новая Жизнь, № 11, 1905 г.

Հատ կենինի.

## ԳՅՈՒՂԱՑԻԱՆԵՐԸ ՅԵՎ ԲԱՆՎՈՐՆԵՐԸ \*

«Գյուղացիական պատգամավորների համառուսական Խորհրդի Լրատուի» № 88-ում (1917 թ. ոգոստոսի 19-ին) չափազանց հետաքրքիր մի հողված ե տպված, վորը գյուղացիության հետ գործ ունեցող կուսակցական բոլոր պրոպագանդիստների ու ազիտատորների ձեռքում հիմնական փաստաթղթերից մեկը պիտի դառնա, ինչպես և գուղղ ուղարկվող կամ գրաւղի հետ առնչություն ունեցող գիտակից բոլոր բանվորների ձեռքում:

**Դյուղացիական** Այդ հողվածի վերնագիրն ե՛ «Փորձնահետիանգեներ»: Կան հրահանգ՝ կազմած 1917 թ. Պետերբուրգում տեղի ունեցած գյուղացիական պատգամավորների համառուսական Լ համագումարին տեղական պատգամավորների բերած 242 հրահանգների հիման վրա»: Հրահանգների ժողովածուի առաջին մասը նվիրված ե քաղաքական ընդհանուր հիմունքներին ու քաղաքական դեմոկրատիայի պահանջներին, յերկրորդ մասը՝ հողային հարցին: (Կհուսանք, վոր գյուղացիական պատգամավորների համառուսական Խորհուրդը կամ վորեւ մեկ ուրիշ մարմին կհավաքելու ժամանակակից պահանջներին իրենց ամբողջ ջանքերը: Սակայն վոչ միություն, թեկուղ այդ կնքված լինի ամենաազ-

\* Քաղված և Վ. Ի. Լենինի 1917 թ. դրամ հողվածից:

նաև պատերազմի հարցին վերաբերող գլուղացիական հրահանգներն ու բանաձեռքը):

Հողի մասնավոր Հրահանգների հավաքածուի համաձայն սեփականու գյուղացին հողի վերաբերմամբ հետեւյալ թշնամու պահանջներն ունին Նախ և առաջ անվճար ցումը, կերպով վերացնել բոլոր տեսակի հողերի, մինչև անգամ գյուղացիական հողերի մասնավոր սեփականությունը, յերկրորդ՝ բարձր կուլտուրայի տնտեսություններ ունեցող հողամասերը հանձնել պետությանը կամ համայնքներին, յերրորդ՝ բոնագրավել գրաված հողերի շնչավոր ու անշունչ վողջ ինվենտարը (բացառություն են կազմելու սակավանող գյուղացիները) և հանձնել պետությանը կամ համայնքներին, չորրորդ՝ արգելել վարձու աշխատանքը, հինգերորդ՝ հողը հավասարապես բաշխել աշխատավորության միջև՝ պարբերաբար հողաբաժանություններ կատարելով և այլն։ Մինչև Հիմնադիր Փողովի գումարումը, վորպես անցողիկ ժամանակի միջոցներ, գյուղացիները պահանջում են անմիջապես որենքներ հրապարակել հողի առուծախն արգելելու մասին, համայնքից բաժանվելու, կտրվելու իրավունքը վերացնելու մասին, ինչպես և անտառները, ձկնորսությունն ու նման այլ զբաղմունքները պաշտպանելու և կապալի յերկարատև պայմանագրերը վերացնելու մասին և այլն։

Բավական ե միքիչ խորհրդածել այս պահանջների վրա, վորպեսզի տեսնենք, վոր միանգամայն անհնար և իրագործել այդ պահանջները, քանի դեռ կապիտալիստների հետ միություն ունենք կապած, քանի դեռ նրանց հետ մեր կապերն ամբողջապես չենք կարել, քանի դեռ կապիտալիստների դասակարգի գեմ վճռական ու անխնական չենք սկսել, քանի դեռ չենք տապալել նրա տիրապետությունը։

Սոցիալիստ-հեղափոխականների ինքնախարեյությունը և գյուղացիներին խաբելը հենց նրանում ե կայանում,

վոր նրանք լենթաղբում են ու տարածում այն միտքը, թե արդարիսի փոփոխություններ ննարավոր ե անել առանց կապիտալիստների տիրապետությունը տապալելու, առանց պետական ամբողջ իշխանությունը պրոլետարիատին փոխանցելու, առանց կապիտալիստների գեմ ուղղված պրոլետարական պետական իշխանության ձեռք առած ամենավճռական ու հեղափոխական միջոցները չքավոր գյուղացիության կողմից պաշտպանություն գտնելու։

Իսկապես վոր, բռնագրավել մասնատիրական ամբողջ հողերը՝ նշանակում ե բռնագրավել բանկերի հարյուրավոր միլիոն կապիտալը, բանկերի, վորտեղ մեծ մասամբ գրավ են գրաված այդ հողերը։ Միթե մտածելու բան ե՝ իրագործել այդ բանը, քանի դեռ հեղափոխական դասակարգի հեղափոխական միջոցներով չենք ջախջախել կապիտալիստների ընդդիմագրությունը, Խոսքն, իհարկե, ասենից շատ կենարոնացած բանկային կապիտալի մասին ե, վոր միլիոնավոր թելերով կապված ե հսկայական յերկրի կապիտալիստական տնտեսության ամենակարևոր կենարոնների հետ և վորը հաղթահարվել կարող ե միայն քաղաքային պրոլետարիատի վոչ պակաս կենարոնացած ուժերով։

Հետո, Պետության հանձնելքարձր կուլտուրայի տընտեսությունները։ Ակներև չի արդյոք, վոր սի պետություն, վոր ընդունակ ե իր ձեռքն առնել արդ սնտեսություններն ու վարել այնպես, վորպեսզի գրանք հիրավի աշխատավորության օգտին ծառայեն և վոչ թե չինովական հետեւյալ կապիտալիստների շահերին, պիտի լինի պրոլետարական հեղափոխական պետություն։

Պրատրուծաբան Զիրաբուծաբանները ինչպես միջոցների մաս և շավոր ու ամշունչ ինվենտարը բռնանավոր սեփականությունը պահպաները՝ արտադրության կանուքան միջոցների սահմանությունը սեփականությունը վոչացումը։ Նորանոր հսկա, պահպան ձերքուներ չե միայն, վոր հասցնում են։ Մի քայլ ե այդ դեպի սոցիալիզ-

մը, վորովհետև ինվենտարի փոխանցումը «պետությանը կամ համայնքներին՝ բացարձակ ոգտագործության համար»՝ նշանակում ե, վոր անհրաժեշտ ե խոշոր սոցիալիստական լեռկազործություն սկսել, կամ թե, համեմայն դեպս, համախմբված մանր տնտեսությունները սոցիալիստական վերահսկողության յենթարկել ու նրանց տնտեսությունը սոցիալիստական ձևով կարգավորել:

Իսկ վարձու աշխատանքի «արգելումը»։ Սա դատարկ մի ֆրազ ե, մոռացված, անոգնական մանր սեփականատերերի անգիտակից-միամիտ մի ցանկություն, վորոնք չեն տեսնում, վոր յեթե գյուղում վարձու աշխատանքի պահեստի բանակ չլինի, կանգ կառնի կապիտալիստական ամբողջ արդյունաբերությունը, վոր շի կարելի «արգելել» վարձու աշխատանքը գյուղում, թույլատրելով այն քաղաքում, և վոր, վերջապես, վարձու աշխատանքի «արգելումը» նշանակում ե վոչ այլ ինչ, բայց յեթե մի քայլ դեպի սոցիալիզմ։

Այստեղ արդեն մենք մոտեցանք արմատական հարցին, այն ե՝ թե բանվորները ինչ վերաբերյալ ունեն դեպի գյուղացիները։

Քսան տարուց ավելի յե, ինչ գոյություն ունի Ռուսաստանում մասսայական սոցիալ-դեմոկրատական բանվորական շարժում (յեթե սկսենք 1896 թ. մեծ գործադուլներից)։ Այդ մեծ ժամանակաշրջանում, լերկու մեծ հեղափոխությունների շնորհիվ, Ռուսաստանի ամբողջ քաղաքական պատմության միջով կարմիր թելի պես ձըգվում ե մի հարց, թե բանվոր դասակարգը պիտի գլուղացիներին դեպի սոցիալիզմ տանի՞, թե լիբերալ բուրժուան յետ պիտի քաշի նրանց, վորպեսզի կապիտալիզմին հարմարվեն։

Այժմ, լերբ պատերազմն արտասովոր կերպով արագացրել ե լիբերի զարգացումը, անհավանական ձևով կերպարանք տվել կապիտալիզմին ու

ժողովրդին դրել յերկընտրանքի առաջ՝ խորտակվել կամ անմիջապես դեպի սոցիալիզմը վճռական քայլեր անել, — այժմ կիսալիբերալ մենշենդմի ու հեղափոխական պրոլետարական բայլշենդմի տեսակետների տարբերությունը հասկանալի ու գործնական ե դառնում, վորպես տասնակ-միլիոնավոր գյուղացիների՝ գործունեյության խնդիր։

Հաշտվեցեք կապիտալի տերապետության հետ, վորովհետև սոցիալիզմի համար «մենք» դեռ հասունացած չենք, ահա թե գյուղացիներին ինչ են ասում մենշենդմիները, ի միջի ալոց, ընդհանրապես «սոցիալիզմի» վերացական հարցը մեջ գցելով խարեյությամբ փոխում վորոշակի մի հարց, թե կարելի՞ յե, արդյոք, պատերազմի հասցրած վերերը բուժել առանց վճռական բայլեր անելու դեպի սոցիալիզմը։

Ես-երեները մա։ Հաշտվեցեք կապիտալիզմի հետ, վորովհերք բուժություն հետև սոցիալիստ-հեղափոխական ցնորամիտներ են, ահա կան ցնորամիտներ են, ահա են են։

Թե գյուղացիներին ինչ են ասում մենշենդմիները և ես-երեների հետ միասին գնում են պաշտպանելու կաղետական կառավարությունը...

Իսկ ես-երեներն իրենց կուրծքը ծեծելով՝ հավատացնում են գյուղացիներին, թե իրենք կապիտալիստների հետ հաշտություն կնքելուն դեմ են, թե իրենք ոռուսական հեղափոխությունը յերբեք բուրժուական չեն համարել և այդ պատճառով ել գնում են պաշտպանելու հենց բուրժուական կառավարությունը։ Ես-երեները գյուղացիների համար, ինչպիսի ծրագիր ել կամենաք, ստորագրում են, թեկուզ դրանք լինեն ամենահեղափոխական ծրագրերը, սակայն մի մտադրությամբ միայն, վորպեսզի լիբերեք շիրագործեն այն, վորպեսզի բարձի տակ դնեն գրանց, վորպեսզի գլուղացիներին խարեն դատարկ խոստաներով, իսկ գործով կաղետների հետ կոալիցիոն մինիստրություն կազմեն ու ամիսներով «համաձայնականությամբ» պարապեն։

Գյուղացիության շահերի նկատմամբ ես-երների կատարած այս աղաղակող, գործնական, անմիջական ու շոշափելի դավաճանությունը դրությունն արտակարգ կերպով փոխում է: Այս փոփոխությունը պիտի հաշվի առնել: Ես-երների դեմ ագիտացիա մղել հին ձեռվ միայն, այնպես, ինչպես այդ անում ելինք մենք 1902—3 թ. ու 1905—7 թ., չի կարելի: Չի կարելի սահմանափակվել «հողի սոցիալիզացիայի», «հողի հավասար ոգտագործման», ռվարձու աշխատանքն արգելելու» և ուրիշ մանր-բուրժուական մտախարությունների տեսական մերկացումներով:

Այն ժամանակ բուրժուական հեղափոխության նախորյակն եր կամ թե՝ չավարտած բուրժուական հեղափոխություն, և մեր զողջ նպատակն եր, նախ և առաջ, տապալել միապետությունը:

Հիմա միապետությունը տապալված է: Բուրժուական հեղափոխությունը վերջացել ե այն չափով, վոր չափով Ռուսաստանը դեմոկրատիկ հանրապետություն ե դարձել՝ կաղետներից, մենշևիկներից ու ես-երներից կազմված կառավարությամբ: Իսկ պատերազմն այս յերեք տարվա ընթացքում յերեսուն տարով մեզ առաջ ե քաշել, Յեփրոպայում ընդհանուր աշխատանքային պարտականություն ու ձեռնարկությունների հարկադրական սիստեմ ստեղծել, ամենաառաջազոր յերկրները քաղցի ու անասելի քայլայման հասցըրել՝ հարկադրելով նրանց սոցիալիզմին անցնելու քայլերն անել: Այն ժամանակի մեր դասակարգալին քաղաքականության հիմնական վորոշումն այն եր, թե միայն պրոլետարիատն ու գյուղացիությունը միապետությունը տապալել կարող են: Յեվ այդ վորոշումը ճիշտ եր: 1917 թվի փետրվար ու մարտ ամիսները հաստատեցին այդ բանը մի ավելորդ անգամ ևս:

Միայն պրոլետարիատը կարող է պատերազմը դեմոկրատիկ հաշտությամբ վերջացնել, նրա հասցըրած վերքերը բուժել և դեպի սոցիալիզմը տանող անպայման ան-

հրաժեշտ ու անհետաձգելի դարձած քայլերն անել, պրոլետարիատը, վոր ղեկավարում ե չքավոր գյուղացիությանը (կիսապրոլետարներին, ինչպես մեր ծրագիրն ե ասում): —ահա մեր դասակարգային քաղաքականության ալժմյան բնորոշումը:

Ես-երները գա- Այստեղից հետևյալ յեղբակացությունը պահանջեցին պիտի անել, վոր ես-երների դեմ պրոպագանից բանդ ու ագիտացիա մղելիս պիտի ծանրանալ այն բանին, թե նրանք դավաճանել են գյուղացիներին: Նրանք վոչ թե գյուղական չքավորության ներկայացուցիչներն են, այլ ունեոր սեփականատերերի: Նրանք ուզում են, վոր գյուղացիությունը միություն կապի վոչ թե բանվորների, այլ կապիտալիստների հետ, այսինքն լենթարկվի նրանց: Նրանք վաճառեցին աշխատավորների ու շահագործվող մասսաների շահերը, վորպեսզի մինիստրական տեղեր ստանան և կագետների ու մենշևիկների հետ միություն կապեն:

Պատմությունը, վոր պատերազմի շնորհիվ արագընթաց ե դարձել, այնքան առաջ ե անցել, վոր հին ֆորմուլաները նոր բովանդակությամբ են լցվել: «Վարձու աշխատանքի արգելումը» առաջ մանր-բուրժուական ինտելիգենտի դատարկ մի ֆրազ եր: Հիմա կյանքում այդ ֆրազն այլ նշանակություն ունի: Միլիոնավոր գյուղական չքավորությունն իր տված 242 հրանանգներում ասում է, վոր նա ուզում ե վերացնել վարձու աշխատանքը, բայց չգիտե, թե ինչպես անի այդ: Իսկ մենք զիտենք, թե ինչպես պիտի անել այդ, մենք գիտենք, վոր վարձու աշխատանքը կարելի լե վերացնել բանվորների հետ միություն կապելով, նրանց ղեկավարությամբ ու կապիտալիստներին ընդդեմ գնալով միայն և վոչ թե նրանց հետ «համաձայնելով»:

Ընկեր գյուղացիներ, ես-երական կուսակցությունը դավաճանեց ձեզ: Նա դավաճանեց խրճիթներին ու պա-

լատների կողմն անցավ, յեթե վոչ միապետների պալատների, ապա այս պալատների, վորտեղ հեղափոխության և, հատկապես, գյուղացիական հեղափոխության չարագույն թշնամիները՝ կադետները Զերնովների, Պեշեխոնովների ու Ավկանունուների հետ միասին միևնույն կառավարության նիստերն են գումարում:

Միայն հեղափոխական պրոլետարիատը, միայն նրա առաջամարտիկ մասը համախմբող բայլշենքների կուսակցությունը կարող ե գործնականապես իրագործել գյուղական չքավորության այն ծրագիրը, վոր ձեւկերպված ե 242 հրահանգներում։ Միայն հեղափոխական պրոլետարիատն իսկապես վոր ձգտում ե վերացնել վարձուաշխատանքը և դրա համար միակ ճիշտ ճամպան ե բըռնում, այն ե՝ տապալել կապիտալը և վոչ թե արգելել ու չշուրջատրել», վոր մշակ վարձեն։ Հեղափոխական պրոլետարիատն իսկապես վոր ձգտում ե բռնագրավել հողը, ինվենտարը, տեխնիկական ու գյուղատնտեսական ձեռնարկությունները, մի խոսքով՝ այն բոլորը, ինչ վոր ուզում են գյուղացիները, և ինչ վոր ես-երները չեն կարող նրանց տալ։

Ահա թե ինչպես պիտի հիմա փոխել գյուղացուն ուղղված բանվորների ճառերի հիմնական գիծը։ Մենք, բանվորներս, կարող ենք տալ ու կտանք ձեզ այն, ինչ վոր գյուղացիական չքավորությունն ուզում ե ու փնտում, հաճախ չիմանալով, թե վորտեղ և ինչպես փնտոի այն։ Մենք, բանվորներս, կապիտալիստների դեմ պաշտպանում ենք շահերն ու միաժամանակ գյուղացիների հսկայական մեծամասնության շահերը, իսկ ես-երները, կապիտալիստների հետ միություն կապելով, դավաճանում են այդ շահերին։

Վատահեցեք բանվորներին, ընկեր գյուղացիներ և լացիներ, կտրտեցեք ձեր կապերը կապիտալիստների հետ։ Միայն բանվորների հետ կապ ունենալով կարող եք իսկապես իրագոր-

ծել 242 հրահանգների ծրագիրը, Ես-երների ղեկավարությամբ կապիտալիստների հետ միության մեջ մնալով այդ ծրագրի վոգուն համապատասխան վոչ մի վճռական ու անդառնալի քայլ լերբեք չեք տեսնի։

Իսկ լերը քաղաքային բանվորների հետ միացած, կապիտալի դեմ անողոք կոփկ սղելով, դուք կսկսեք իրագործել 242 հրահանգների ծրագիրը, այն ժամանակ վողջ աշխարհը ոգնության կզա թե ձեզ և թե մեզ, այն ժամանակ այդ ծրագրի հաջողությունը, վոչ թե իր ներկա ձևակերպումով, այլ իր ելությամբ, ապահովված կլինի։ Այն ժամանակ, վերջապես, կզա կապիտալի ու վարձուաշխատանքի պետության վախճանը։ Այն ժամանակ կսկսվի սոցիալիզմի թագավորությունը, խաղաղության ու աշխատավորության թագավորությունը։

Ռաբուխ, № 6, 1917 թ.

Համ Լենինի

## ԴԵԿՐԵՏ ՀՈՂԻ ՄԱՍԻՆ (Քրել և Վ. Ի. Լենինը)

Հնդունված Խորհրդաների II համագումարի կողմից  
1917 թ. հոկտեմբերի 26 (գիշերվա ժամը 2-ին)

1. Հողի կալվածատիրական սեփականությունն անմիջապես, առանց վորևե հետզնման, վերացվում է։

2. Կալվածատիրական կալվածքները, ինչպես և կայսերական տան, վանքապատկան ու յեկեղեցապատկան բոլոր հողերը, իրենց վողջ շնչագոր ու անշունչ ինվենտորով, ագարակների շինություններով ու բոլոր պարագաներով հանդերձ անցնում են՝ մինչև Հիմադրի Ժողովը՝ շրջանային (ՅՈԼՈՍՏԻՈЙ) հողալին կոմիտեներին ու գյուղացիական պատգամ սվորների գավառական խորհուրդներին ի անորինություն։

3. Այբողջ ժողովրդին պատկանող՝ բռնագրաված կալվածքների վորևե վչացումն այսուհետև ծանր հանցագոր-

ծություն ե համարվում և պատժվում ե հեղափոխական դատարանի կողմից։ Դյուզացիական պատգամավորների գավառական խորհուրդներն անհրաժեշտ բոլոր միջոցները ձեռք են առնում, վորպեսզի կալվածատիրական կալվածքները բռնագրավելու ժամանակ ամենախիստ կարգը պահպանեն, ինչպես և վորոշեն, թե ինչ չափի ու ինչպիսի հողամասեր պիտի բռնագրավել, կազմեն բռնագրաված ունեցվածքի ճիշտ ցուցակը և ամենախիստ՝ հեղափոխական ձեռք պաշտպանեն ժողովրդին անցած հողալին տընտեսություններն իրենց բոլոր շենքերով, գործիքներով, անասուններով, պահեստի պաշարեղեններով և այլն։

4. Մինչև Հիմնադիր Ժողովի վերջնական վճիռը, հողային փոփոխություններն իրագործելու համար, ամենուրեք ղեկավարվել գյուղացիական հրահանգով, վոր կազմել ե «Դյուզացիական պատգամավորների Համառուսական Խորհրդի լրատուի» խմբագրությունը տեղական գյուղացիական 242 հրահանգի հիման վրա և հրատարակած ե «Լրատու»-ի № 88-ի մեջ (Պետերբուրգ, ոգոստոսի 19-ը 1917 թ.)

(«Բանվորա-գյուղացիական կառավարության որենսդրությունների ու կարգադրությունների հավաքածու» 1914 թ.)

#### Վ. Ի. ԼԵՆԻՆԻ «ԱՎԵԼԻ ԼԱՎ Ե ՔԻԶ, ԲԱՅՑ ԼԱՎ» ՀՈԴՎԱԾԻՑ\*.

Մենք պիտի աշխատենք այնպիսի մի պետություն կառուցել, վորի մեջ բանվորները պահպանեն իրենց ղեկավարությունը գյուղացիների վերաբերմամբ, գյուղացիների վստահությունը իրենց վերաբերմամբ և մեծագույն խնալությամբ վտարեն իրենց հասարակական հարաբերություններից ավելորդաբանության ամեն մի հետք։

Մենք պիտի մեր պետական ապահարատը մաքսիմալ շափի խնայողական դարձնենք։ Մենք պիտի վտարենք

այնտեղից ավելորդաբանության բոլոր հետքերը, վոր այնքան շատ մնացել են դեռ ցարական Ռուսաստանից ու նրա բյուրոկրատիկ-կապիտալիստական կարգից։

Զի՞ լինի, արդյոք, դա գյուղացիական սահմանափակության թագավորություն։

Վո՞չ։ Յեթե մենք պահենք բանվոր դասակարգի ղեկավարությունը գյուղացիների վերաբերմամբ, ապա մենք հնարավորություն կունենանք մեր պետության մեջ տընտեսության մեծագույն ու մեծագույն խնայողությամբ տնտեսած ամենաչնչին կոպեկն անգամ հատկացնել մեր խոշոր մեքենայական արդյունաբերությանը, ելեկտրիֆիկացիայի ու հիդրոտորֆի զարգացմանը, Վոլխովստրոյի կառուցումը վերջացնելուն և այլն։

Սրա մեջ ե, և միայն սրա մեջ ե լինելու մեր հույսը։ Միայն այդ ժամանակ մենք հնարավորություն կունենանք, յեթե պատկերավոր արտահայտվելու լինենք, մի ձիուց մյուս ձիուն հեծնել, այսինքն գյուղացիական, գեղկական, քոսոտ ձիուց, քայլայված գյուղացիական յերկրին հարմար խնայողությունների ձիուց հեծնել մի ձիու, վոր պրոլետարիատը փնտում ե իր համար և չի կարող չփընտռել—խոշոր մեքենայական արդյունաբերության, ելեկտրիֆիկացիայի, Վոլխովստրոյի ձիուն։

Մենք, անշուշտ, ի վիճակի կլինենք դիմանալ, յեթե միայն մեր ապահարատը մաքսիմալ շափով զտենք, նրա մեջ յեղած բացարձակ անհրաժեշտություն չկազմող բաները մաքսիմալ շափով կրծատենք։ Յեվ ընդունին մենք ի վիճակի կլինենք դիմանալ վոչ թե մանր-գլուղացիական յերկրի, վոչ թե այս ընդհանուր սահմանափակության մակերեսութիւն վրա մնալով, այլ մի մակերեսութիւն, վոր անշեղորեն բարձրանում ե հառաջ, հառաջ դեպի խոշոր մեքենայական արդյունաբերությունը։

\* Գրված է 1923 թ.։

ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԲԱՆՎՈՐ  
ԴԱՍԱԿԱՐԳԸ ՄՈՏԱԿԱ ՊԱՏՄԱԿԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ  
(Պրավդա № 219, 1923 թ. սեպտեմբերի 28).

Կապի մասին՝ Խորհրդային Ռուսաստանում, ամբողջ կապի մասին՝ ԽՍՀՄ պայմանաբառերի (պարօն) և լոգունգների լոգունգը բանվոր դասակարգի ու գյուղացիության կապի լոգունգն եւ Բոլգարիայում բանվորների ու գյուղացիների բլոկը Յանկովի կառավարության դեմ հերոսակա. կոիվ ե մղում. Գերմանիայում գյուղացիները միություններ են կազմակերպում, վորոնք բանվոր դասակարգի կոմմունիստական կուսակցության հետ ձեռքածեռքի տված են գնում. կոմմունիստական ինտերնացիոնալի բոլոր սեկցիաներն առաջադրել են բանվորացյուղացիական կառավարության լոգունգը. Ամերիկայի Միացյալ Նահանգներում բանվորների ու ֆերմերների միությունը քաղաքական կյանքի նույնպիսի մի ռեալ փաստ եւ Յապոնիայում բանվորներն են ղեկավարել մանր գյուղացի-կապալառուների շարժումը և այլն, և այլն. Վերջապես, ամբողջ արդյունաբերական բանվորական «Արեմուտքը» միության մեջ ե գտնվում գյուղացիական «Արեկելքի» հետ.

Այս փաստերի վրա արժե մտածել: Սրանց նշանակությունն այնքան մեծ ե, վոր անհրաժեշտ ե մինչև վերջը քննել այս հարցը:

Վոր բանվոր դասակարգն ու գյուղացիությունը յերկու տարբեր դասակարգեր են, վոչ մի կասկածի յենթակա չի այդ: Քաղաքական վորոշ ըրջաններում գյուղացիությունը քանից բուրժուազիայի կողմն ե յեղել, և գյուղական յերիտասարդների կոշիկները քաղաքային բանվորների գլուխներն են ջախջախել: Յեվ, այնուամենայնիվ, գյուղացիությունը, համենայն դեպս, իր վորոշ մասով, ալժմ պրոլետարիատի յետելից ե գնում:

Կալվածաերերի Նախ և առաջ պատմական մի համեմատությունը վերհիշենք: Արդյունաբերական գիտի միությունը բուրժուազիան ու ազնվական կալվածաբարերի են: Կալվածատեր մարզերը դասակարգեր են: Կալվածատեր մարզան-գոմեշը կալվածատիրական աշխարհի պատվարն ե, նրա կրողը, նրա քաղաքակրթության հասարակական վերին շերտը: Արդյունաբերական բուրժուազիան կապիտալիստական մի այլ հասարակության կրողն ե, նրա աերը, կանոնավորողն ու գլուխը: Կար ժամանակ, յերբ արդյունաբերական բուրժուազիան ապստամբության դրոշակ քարձրացը եց կալվածատերերի դեմ և գյուղացիների ձեռքով հրդեհնեց նրանց ագարակները (Ֆրանսիա): «Տորերի» ու «Վիգերի» կոիվ Անգլիակում՝ դասակարգային կովի կլասսիկ որինակն ե, դասակարգային կուվի, վոր տեղի յեր ունենում մի կողմից կալվածատերերի ու մյուս կողմից բուրժուազիայի միջև: Յեվ, այնուամենայնիվ, հիմա, սոցիալիստական այլ կապակցությամբ, կապիտալիստների ու կալվածատերերի, նույնիսկ կիսաֆեոդալ կալվածատերերի միությունը ուեալ փաստ ե: Նեկավար դերը կապիտալիստին ե պատկանում: Նրա ձեռքումն ե պետական կազմակերպությունը: Նա «վարում ե» վողչ կապիտալիստական հասարակությունը, իր կիսաֆեոդալ կալվածատիրական պոչի հետ միասին: Իսկ կալվածատերյունկերը պաշտպանում ե իր դաշնակցին, գնում ե նրա յետերից ու նրա նեցուկը կազմում: Վորքան առաջ ե գնում կապիտալիստական եվոլյուցիան, այնքան ել շուտ կապիտալիստը հեղաշրջում ե կալվածատերին, վերջինս այնքան ել շուտ «կապիտալիստականանում ե», կալվածատերի տնտեսությունն այնքան ել արագ հետզետե կապիտալիստական անտեսությունն ե գառնում:

Ալժմ հասարակության կապիտալիստական ղեկավարությունն անհնարին ե դառնում: Այս ճշմարտությունն իրեն համար ճանապարհ ե հարթում պատերազմի, տնտե-


սության անկման ու հեղափոխությունների միջոցով։ Յեզ  
այն չափով, ինչ չափով հասարակության ղեկավարու-  
թյունը պրոլետարիատի ձեռքն ե անցնում, աշխատավոր  
յերկու դասակարգերի՝ բանվորության ու գյուղացիու-  
թյան բլոկն ե ստեղծվում և ամրապնդվում։

Բանվորների ու Հեղաշրջումից առաջ ու հետո ղեկա-  
գյուղացիների վար դերը պրոլետարիատին ե պատկա-  
միությունը կա նում. պետական կազմակերպությունը նրա  
էնվ կլին։ ձեռքում ե գանվում։ Գյուղացիությունը

պաշտպանում ե իր այս դաշնակցին ու նրա խոշոր նե-  
ցուկը կազմում։ Վորքան արագ ե կարգավորվում տնտե-  
սական կյանքը, այնքան ել շուտ պրոլետարիատը հեղա-  
շրջում ե գյուղացիությանը, և գյուղացիական տնտեսու-  
թյունը (շրջանառության, վարկի ու կոռպերացիալի մի-  
ջոցով) հետզիետե «աճում ու դառնում» հասարակության  
համասոցիալիստական մի կազմակերպություն։

Այլ խոսքով՝ յեթե մենք անցողիկ շրջանը (պետա-  
կան իշխանության նվաճման ու պրոլետարիատի դիկտա-  
տուրակի շրջանը) դիտում ենք դասակարգակին հեղաշր-  
ջումների ու խմբավորումների տեսակետից, ապա պիտի  
ասենք, վոր կալվածատերերի ու բուժութուազիայի միու-  
թյունը փոխարինվում ե բանվորների ու գյուղացիների  
միությամբ։

Այսպիսով, մարդկության գարգացման հսկայական  
պատմական մի շրջանը պիտի զարգանա մուրճի ու ման-  
գաղի նշանի տակ։ Բանվորների ու գյուղացիների միու-  
թյունը մոտիկ ապագայում համաշխարհային պատմու-  
թյան վճարական գործոն ե դառնալու։



Ն. ԲՈՒԽԱՐԻՆ

### Հ Ա. Բ Յ Ե Բ Ի Ռ.

1. Ի՞նչ եր խոստանում ժողովրդին «Մեծ ռեֆորմ»։
2. Ի՞նչի՞ հետևանք եր «Մեծ ռեֆորմ»։
3. Ի՞նչ դարձավ գործնականում այդ ռեֆորմը։
4. Ի՞նչպես եր կատարվում գյուղացիների ճորտությունից  
ազատագրման գործը և ում ձեռքով։
5. Ի՞նչ բան և հետգնումը և ում ոգտին եր ծառայում։
6. Ի՞նչ վիճակ եր ապրում գյուղացիությունը հետոհեգոր-  
մյան քառասնամյակում և ինչ պատահարների յեր  
յենթակա։
7. Բացի կալվածատիրական ճնշումից ել ի՞նչ ճնշում ավե-  
լացավ գյուղացիության վրա։
8. Ի՞նչ ազդեցություն ունեցավ փողի իշխանությունը գյու-  
ղացիության շերտավորման գործում։
9. Ի՞նչ ձևով կարող եր գյուղացին բարելավել իր վիճակը։
10. Բանվորական շարժման դերը գյուղացիության գործում։
11. Ի՞նչ պիտի անի բանվորական կուսակցությունը, վոր-  
պեսզի գյուղացիությանը ազատագրե ճորտական վի-  
ճակից։
12. Ի՞նչ կերպ կարելի յե զարկ տալ դասակարգային պայ-  
քարին գյուղում։
13. Սոց-ռեմոկրատիան ինչ դիրք պետք ե բռներ գյուղա-  
ցիական շարժման նկատմամբ։
14. Ի՞նչ եր ուղում գյուղացիությունը հեղափոխությունից։
15. Ի՞նչ և նշանակում «ամբողջ ազատությունը» և «ամ-  
բողջ հողը» գյուղացիներին։
16. Ի՞նչ նշանակություն ունի բանվորության պարզած կար-  
միր գրոշակը։

17. Ինչի՞ համար և պայքարում՝ պրոլետարիատը և ժողովը  
գնում:
  18. Գյուղացիական հրահանգները ինչի՞ շուրջն են պատվում:
  19. Ինչնեւ չեր կարելի գյուղացիության պահանջներն իրա-  
գործել հոկտեմբերից առաջ:
  20. Ինչի՞ սեջ եր կայանում ես-երների դավաճանությունը:
  21. Ի՞նչ ե նշանակում՝ բոնազրավել մասնատիրական բոլոր  
հողերը:
  22. Հեղափոխական պրոլետարիատն իր դիկտատուրայի շրջա-  
նում ի՞նչպես պետքն կառուցե պետական ապարատը:
  23. Ի՞նչ ձևով ե արտահայտվել բուրժուազիայի և կալվա-  
ծատիրության միությունը:
  24. Ի՞նչ ձևով պետք ե արտահայտվի բանվորների և գյու-  
ղացիության կապն ու միությունը:
-

30



ՀՀ Ազգային գրադարան

NL0935780

311



1927р.

11

26241

ԳԻՒԾ 20 4.